

Էներգիա և վառելափայտ

Բնապահպանական ԳՎՓ հետազոտության արդյունքները




Հայաստանում տնային տնտեսությունների մեծ մասը ջեռուցման համար օգտագործում է էներգիայի տարբեր աղբյուրներ, հիմնականում՝ **գազ**:

Վառելափայտ օգտագործում են Երևանում հարցվածների ընդամենը 9%-ը, մարզերի քաղաքներում՝ 24%-ը, իսկ գյուղերում՝ 75%-ը:



Գյուղերում ջեռուցման համար լայնորեն օգտագործվում է նաև **գոմաղբը**՝ հարցվածների 32%:



Գյուղերում **գազը** օգտագործվում է հիմնականում **սնունդ պատրաստելու**, իսկ **վառելափայտը**՝ ջեռուցման համար:



Հարցվածների 90%-ը գիտեն, որ **չոր վառելափայտն** ավելի լավ է այրվում:

Հարցվածների մեծամասնությունը պատրաստ է ներդրում կատարել **էներգիայի ստացման նոր աղբյուրներում**, եթե դրանք վառելափայտից էժան լինեն և եթե դրանց օգտագործումը հարմար լինի:





Հնարավորության դեպքում նախընտրելի տարբերակներից է **արևային էներգիան**:

Ներդրում կատարելու որոշման մեջ կարևորվում են նաև **առողջական անվտանգության** հետ կապված հարցերը:



Բնապահպանական ԳՎՓ հետազոտություն

Բնապահպանական գիտելիք-վերաբերմունք-փորձ (ԳՎՓ) հետազոտությունն իրականացվել է ECOserve բնապահպանական ծրագրի պատվիրակմամբ՝ ACT Assist GmbH- ի կողմից 2019 թվականին: ECOserve ծրագիրն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համակարգմամբ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Implemented by:
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH